ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

1901 հ. Ստեփանավան, Սոս Սարգսյան փ/շ/ 1 (374-256) – 2-22-33
էլ. փոստ՝ stepanavan.hamaynqapetaran@gmail.com
վեբկայք՝ www.stepanavan.am

«1374» «28» նոյեմբերի 2024թ.

«ԴԻԱՄԱՆԹ»ՍՊԸ –ի տնօրեն Ա.Տոնոյանին
հասցե՝ ՀՀ Արագածոտնի մարզ, Ուջան բնակավայր, 2փ, փող 24
էլեկտրոնային փոստի հասցե՝ aslantonoyan@mail.ru

Ծ Ա Ն Ու Ց Ու Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

«Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և «ԴԻԱՄԱՆԹ»ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 10.04. 2023թ.-ին կնքված «ՀՀ-ԼՄՍՀ-ՀԲՄԱՇՁԲ-23/04» ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կապալառուն ստանձնում է ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան համայնքի Աղայան 1-ին և 2-րդ նրբանցքների, 409 Դիվիզիա նրբանցքի և Նելսոն Ստեփանյան փողոցների հիմնանորոգում տուֆե սալարկումով աշխատանքների կատարման պարտավորությունը՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված թիվ 2-ով սահմանված օրացույցային գրաֆիկի և ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N 2340-Ա որոշման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը»:

Պայմանագրի 3.1.4-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջելիատուցելուիրենպատճառվածվնասները, եթե.

ա) Կապալառունժամանակինչիսկսում աշխատանքիկատարումըկամ աշխատանքըկատարումէայնքանդանդաղ, որդրաժամանակինավարտըդառնումէակնհայտանհնար,

բ) Կապալառունխախտելէպայմանագրի 1.3 կետումնախատեսվածժամկետը (ներառյալօրացուցայինգրաֆիկը),

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կապալառուն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները, այն է՝ պայմանագրի կնքումից հետո չի իրականացրել աշխատանքների պատշաճ կատարումը, թույլ է տվել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման և աշխատանքն ամբողջ ծավալով Պատվիրատուին հանձնելու ժամկետի կետանց, ուստի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկը, ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, և պայմանագրի 3.1.4 կետով սահմանված՝ իր կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու և իրեն պատճառված վնասների հատուցում պահանջելու իրավունքից, միակողմանի (մասնակի) հրաժարվում է կնքված պայմանագրից, համարելով այն լուծված:

Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում ենթակա է գանձման նաև պայմանագրի որակավորման ապահովման գումարը՝ 25723750(Քսանհինգ միլիոն յոթ հարյուր քսաներեք հազար յոթ հարյուր հիսուն) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի900255101140 հաշվեհամարին և պայմանագրի կատարման ապահովման գումարը՝ 12991793(Տասներկու միլիոն ինը հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր իննսուներեք) ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի 900255101140 հաշվեհամարին:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով՝ կիրառելի է ՀՀ կառավարության 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, ինչը բխում է նաև պայմանագրի 8.11 կետից:

Միաժամանակ, «Գնումների մասին » օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդ որում նշված որոշումը պատվիրատուի ղեկավարը կայացնում է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասը օրացույցային օրվա ընթացքում: Որոշումը կայացվելուն հաջորդող օրն այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքում որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

-Լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը վճարել է պայմանագրի և որակավորման ապահովման վերը նշված գումարները («Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ստեփանավանի համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկի900255101140 հաշվեհամարին), ապա Պատվիրատուն տվյալ մասնակցի ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնի լիազորված մարմին.

-Մասնակցի կամ պայմանագիրը կնքած անձի կողմից պայմանագրի և որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԱՐՄԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝
համայնքապետարանի աշխատակազմի
քարտուղար Հասմիկ Մովսիսյան
հեռ. 0256-2-26-74